## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 42

24 ՀՈՒՆԻՍԻ 2019թ.

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.

Ավագանին հաստատեց հետևյալ օրակարգը՝

1. Մալիշկա համայնքի ավագանու թիվ 7 նիստի օրակարգի հաստատում,
2. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Մալիշկա համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.16188 հա և 0.0450 հա հողատարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու մասին
3. Մալիշկա համայնքի 2019թ. տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե գումար հատկացնելու և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին,
4. Մալիշկա համայնքում վերջին զանգի միջոցառումները կազմակերպելու համար համայնքի ավարտական դասարանների աշակերտներին դրամական օգնություն տրամադրելու մասին,
5. Մալիշկա համայնքի ճանապարհները տեսախցիկներ տեղադրելու համար համայնքի բյուջեից անհրաժեշտ ներդրումներ կատարելու մասին,
6. Մալիշկա համայնքի ավագանու 15.04.2019թ. թիվ 30 որոշումը անվավեր ճանաչելու մասին
7. Մալիշկա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելու համաձայնություն տալու մասին,
8. Մալիշկա համայնքի վարչական տարածքում գտնվող 0.0285 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | [signature] | | |
| Ա. Ալոյան | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Գ.Հարությունյան | | | |
| Մ. Սարգսյան | | | |
| Ա. Մովսիսյան | | | |
| Ա.Մարգարյան | | | |
| Թ. Ստեփանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 43

24 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.16188 ՀԱ և 0.0450 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 94-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. 0.16188 հա (ծածկագիրը՝ 10-032-0221-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը, 25 տարի ժամկետով, մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 4000 (չորս հազար):
2. 0.045 հա (ծածկագիրը՝ 10-032-0221-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը, 25 տարի ժամկետով, մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 3000 (երեք հազար):

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | | | |
| Ա. Ալոյան | | | |
| Վ. Գիվարգիզյան | | | |
| Գ.Հարությունյան | | | |
| Մ. Սարգսյան | | | |

| | | | |
|---|---|---|---|
| ս.սարգարյաս | | | |
| Թ. Ստեփանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 44-Ն

24 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. Մալիշկա համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից կատարել հատկացում ֆոնդային բյուջե՝ 14822.0(տասնչորս միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամի չափով:
2. Պակասեցնել՝

Ա) Ջրամատակարարում և կոյուղու համակարգ 06.03.01.58 գործառնական դասակարգման 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածից 300.0 (երեք հարյուր) հազ. դրամ, 4241 /մասնագիտական ծառայություններ/ հոդվածից 300.0 (երեք հարյուր) հազ. դրամ:

Բ) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 01.06.01.60 գործառնական դասակարգման 5121 /տրանսպորտային սարքավորումներ/ հոդվածից 3250.0 (երեք հազար երկու հարյուր հիսուն ) հազ. դրամ

Ավելացնել՝

1. Մալիշկա համայնքի ճանապարհային տրանսպորտ 04.05.01.51 գործառնական դասակարգման / 5112 տրանսպորտային շինությունների կառուցում / հոդվածին 14822.0 (տասնչորս միլիոն ութ հարյուր քսաներկու հազար) դրամ:

2. Ջրամատակարարում և կոյուղու համակարգ 06.03.01.58 գործառնական դասակարգման 4216 /գույքի և սարքավորումների վարձակալություն/ հոդվածին 130.0 (մեկ հարյուր երեսուն) հազ. դրամ:

3. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 01.06.01.60 գործառնական դասակարգման 4241 /մասնագիտական ծառայություններ/ հոդվածին 470.0 (չորս հարյուր յոթանասուն) հազ. դրամ, 5112 /շենք շինությունների կառուցում / հոդվածին 2900.0 (երկու հազար ինը հարյուր) հազ. դրամ:

4. Նախագծային աշխատանքներ 01.05.01.51 գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին 50.0 (հիսուն ) հազ. դրամ:

5. Կառավարման մարմնի պահպանում 01.01.01.51 գործառնական դասակարգման 5132 /համակարգչային ծրագրեր/ հոդվածին 300.0 (երեք հարյուր) հազ. դրամ

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | [signature] | | |
| Ա. Ալոյան | [signature] | | |
| Վ. Գիվարգիզյան | [signature] | | |
| Գ.Յարությունյան | [signature] | | |
| Մ. Սարգսյան | [signature] | | |
| Ա. Մովսիսյան | [signature] | | |
| Ա.Մարգարյան | [signature] | | |
| Թ. Ստեփանյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature, stamp] Գ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 45

24 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի պահանջով`

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ`

Տալ համաձայնություն.

1. Մալիշկա համայնքի ավարտական դասարանների աշակերտներին, յուրաքանչյուր աշակերտի թվով տրամադրել դրամական օգնություն 5000(հինգ հազար) ՀՀ դրամի չափով` մայիսի 25-ին վերջին զանգի միջոցառումները կազմակերպելու համար,

2. Առաջարկել համայնքի ղեկավարին հիմք ընդունել համայնքի դպրոցների տնօրենների ներկայացրած ցուցակները:

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | [signature] | | |
| Ա. Ալոյան | [signature] | | |
| Վ. Գիվարգիզյան | [signature] | | |
| Գ.Հարությունյան | [signature] | | |
| Մ. Սարգսյան | [signature] | | |
| Ա. Մովսիսյան | [signature] | | |
| Ա.Մարգարյան | [signature] | | |
| Թ. Ստեփանյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար` Գ. Ն Ա Զ Ա Ր Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 46

24 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐՈՎ ՀԱԳԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության բաժնի 25.03.2019թ. N 83/611 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Տալ համաձայնություն

Համայնքի վարչական տարածքում բնակարանային գողությունների, անասնագողությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Մալիշկա համայնքի ճանապարհները տեսախցիկներ տեղադրելու և սպասարկելու համար համայնքի բյուջեից կատարել անհրաժեշտ ներդրումներ:

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | | | |
| Ա. Ալոյան | | | |
| Վ. Գիվարգիզյան | | | |
| Գ.Յարությունյան | | | |
| Մ. Սարգսյան | | | |
| Ա. Մովսիսյան | | | |
| Ա.Մարգարյան | | | |
| Թ. Ստեփանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. ՆԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 47-Ն

24 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.04.2019Թ. ԹԻՎ 30 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի պահանջով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Անվավեր ճանաչել Մալիշկա համայնքի ավագանու 15.04.2019թ.-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Մալիշկա համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերական նշանակության «ԿԱԼԵՐ» կոչվող տարածքից 0.18 հա հողատարածք վարձակալության իրավունքով տրամադրելու մասին» թիվ 30 որոշումը:

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | | | |
| Ա. Ալոյան | | | |
| Վ. Գիվարգիզյան | | | |
| Գ.Յարությունյան | | | |
| Մ. Սարգսյան | | | |
| Ա. Մովսիսյան | | | |
| Ա.Մարգարյան | | | |
| Թ. Ստեփանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. Ն Ա Զ Ա Ր Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 48

24 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի 3-րդ կետի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Տալ համաձայնություն

Մալիշկա համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու համար.

1) 0.02301 հա (ծածկագիրը՝ 10-032-060-, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ տնամերձ, բնակելի կառուցապատման) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 121 492 (մեկ հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ,

2) 0.84895 հա (ծածկագիրը՝ 10-032-0281-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ի չափով՝ 265 296 (երկու հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ,

3) 1.72677 հա (ծածկագիրը՝ 10-032-0272-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 300 %-ի չափով՝ 323 769(երեք հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ,

4) 0.26591 հա (ծածկագիրը՝ 10-032-0272-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 300 %-ի չափով՝ 49 858(քառասունինը հազար ու հարյուր հիսունութ) ՀՀ դրամ,

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | | | |
| Ա. Ալոյան | | | |
| Վ. Գիվարգիզյան | | | |
| Գ.Յարությունյան | | | |
| Մ. Սարգսյան | | | |
| Ա. Մովսիսյան | | | |
| Ա.Մարգարյան | | | |
| Թ. Ստեփանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 49

24 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.

## ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0285 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Մալիշկա համայնքի վարչական տարածքում գտնվող Սեդա Շահբազյանին և համասեփականատերեր՝ Թամարա Կատվալյանին, Քնար Սարգսյանին, Լուսինե Սարգսյանին և Էմին Սարգսյանին սեփականություն հանդիսացող 0,0285 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիրը՝ 10-032-0221-0683, գործառնական նշանակությունը՝ խաղող) հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության(անասնագոմ):

| Ավագանիներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Է. Ալեքսանյան | [signature] | | |
| Ա. Ալոյան | [signature] | | |
| Վ. Գիվարգիզյան | [signature] | | |
| Գ.Հարությունյան | [signature] | | |
| Մ. Սարգսյան | [signature] | | |
| Ա. Մովսիսյան | [signature] | | |
| Ա.Մարգարյան | [signature] | | |
| Թ. Ստեփանյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ Գ. Ն Ա Զ Ա Ր Յ Ա Ն